**01/10.1/8713-09**

2009-11-30

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

Ներկայացված օրենքի նախագծի ընդունման դեպքում՝

1) կխախտվի հավասարության սկզբունքն ընդհանրապես բոլոր սփյուռքահայերի և, մասնավորապես, վիրահայերի միջև.

2) այն ոչ միայն չի նպաստի Ջավախքի հայաթափման տեմպերի թուլացմանը, այլ, ընդհակառակը, կարող է ունենալ հակառակ ազդեցություն և նպաստել Ջավախքի հայաթափմանը։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

*Նախագիծ*
*Պ-747-29.10.2009-ՊԻ-010/0*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

***Հոդված 1.*** «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-47-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի առաջին մասը «վիզայի ռեժիմ» բառակապակցությունից հետո լրացնել հետեւյալ արտահայտությամբ՝

«(բացառությամբ Վրաստանի Հանրապետության Սամցխե-Ջավախք եւ Քվեմո-Քարթլի նահանգներում գրանցված եւ բնակվող հայազգի քաղաքացիների)»:

***Հոդված 2.*** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հիմնավորում**

**«Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման վերաբերյալ**

Ներկայացվող նախա•ծով առաջարկվում է դյուրացնել Վրաստանի Սամցխե-Ջավախք եւ Քվեմո- Քարթլի նահանգներում գրանցված եւ բնակվող ազգությամբ հայ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կամ մշտական բնակությունը:

Վրաստանի վերոնշյալ նահանգներում բնակվող մեր հազարավոր հայրենակիցներ բազմաթիվ թելերով կապված են մայր հայրենիքի հետ: Նրանցից շատերը ժամանակավոր, սեզոնային կամ մշտական աշխատում եւ ապրում են Հայաստանում: Մեծ թիվ են կազմում այդ նահանգներից կրթություն կամ բուժօգնություն ստանալու նպատակով, ինչպես նաեւ

ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության հետեւանքով հայրենիք ժամանած մեր քաղաքացիների թիվը։

Այս նախագծի ընդունումը կնպաստի Ջավախքի հայաթափման տեմպերի թուլացմանը։

Ջավախքը առանձնահատուկ տարածաշրջան է եւ հայրենիքի կողմից առանձնահատուկ վերաբերմունք է պահանջվում։